# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**01 օգոստոսի 2019 թվականի N 199 -Ա**

## «ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով և 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի N 145-Ն որոշմամբ հաստատված կարգի 70-րդ կետով, հիմք ընդունելով «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2019թ. հուլիսի 25-ի «Մրցույթում հաղթող ճանաչվելու մասին» N 4 որոշումը և եզրակացությունը և ՀՀ Սյունիքի մարզպետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 73-Ա, 2019 թվականի հուլիսի 30-ի N 75-Ա, N 76-Ա որոշումները՝

**կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

Դավիթ Մաշուրյանին 2019թ. օգոստոսի 01-ից ազատել «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից և նշանակել նույն ընկերության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ երեք տարի ժամկետով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

Недействительная подпись

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2019թ.օգոստոսի 01
ք. Կապան